

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ԾԱՆՈԹԱՅԵԼ Է ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ

16.09.2015

ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը Հրազդանի քաղաքապետ Ա. Դանիելյանի և մարզպետարանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ աշխատանքային շրջայց է կատարել Հրազդան քաղաքի տարբեր թաղամասերում, որտեղ իրականացվում են ասֆալտապատման աշխատանքներ:

Շրջայցի ընթացքում Կոտայքի մարզպետը ծանոթացել է ինչպես ՀՀ Կառավարության կողմից մարզի համայնքների հրատապ հիմնախնդիրների լուծման ծրագրի շրջանակներում, այնպես էլ համայնքային բյուջեով իրականացվող ասֆալտապատման աշխատանքների ուղղություններին:

Մարզի ղեկավարը հանդիպել և զրուցել է նաև համապատասխան թաղամասերի բնակիչների հետ, ովքեր իրենց գոհունակությունն են արտահայտել պետական աջակցությամբ իրականացվող ծրագրի վերաբերյալ:

Կոտայքի մարզպետը շինարարությունն իրականացնող կազմակերպությունների պատասխանատուներին հանձնարարել է դեռևս ընթացող ասֆալտապատման իրականացնել որակական սահմանված չափանիշների լիարժեք պահպանման սկզբունքներով և սահմանված ժամկետներում ապահովել Հրազդան քաղաքի համապատասխան թաղամասերի ասֆալտապատման աշխատանքերի ավարտը:

Հրազդան քաղաքի Նարեկացու փողոց կատարած այցելության շրջանակներում Կոտայքի մարզպետը եղել է նաև համայնքի Սուրբ Խաչ եկեղեցում: